ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. ՕԳՏՎՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

VENICE COMMISSION
COMMISSION DE VENISE

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Իրավունքի գերակայությունը, ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները՝ Եվրոպայի խորհրդի երեք հիմնասյուները, սերտորեն փոխկապակցված են և անբաժանելի:

- Ժողովրդավարությունն ապահովում է քաղաքացիների ներգրավվածությունը հանրային որոշումների կայացման գործընթացում
- Մարդու իրավունքները պաշտպանում են անհատներին իրենց ազատությունների հանդեպ կամայական կամ չափազանց միջամտությունից և երաշխավորում մարդկային արժանապատվությունը
- Իրավունքի գերակայությամբ ղեկավարվող պետությունն ապահովում է հանրային իշխանության իրականացման կարգավորումն ու վերահսկումը:

Իրավունքի գերակայությունը խթանում է ժողովրդավարությունը, քանի որ սահմանում է հաշվետվողականություն հանրային իշխանություն իրականացնողների համար: Այն երաշխավորում է մարդու իրավունքները անկախ ու անաչառ արդարադատության համակարգի միջոցով և պաշտպանում փոքրամասնություններին մեծամասնության կամայական կառավարումից:

Ինչու՞ է դա կարևոր
Պետությունն առանց հստակ կանոնների հակված է անկայունության և կամայականության: Իրավունքի գերակայությունը պաշտպանում է բոլորի հիմնարար ազատությունները: Այն ժամանակակից ժողովրդավարությունների հիմքն է:

Իրավունքի գերակայությունը հիմնված է հինգ հիմնարար սկզբունքների վրա՝

- **Օրինականություն** – օրենքները կիրառվում են բոլորի նկատմամբ և սահմանում իշխանության սահմանները:
- **Իրավական որոշակիություն** – օրենքները հստակ, մատչելի և կանխատեսելի են:
- **Իշխանության չարաշահման կանխարգելում** – կիրառվում են վերահսկման մեխանիզմներ՝ կամայականությունից խուսափելու համար:
- **Օրենքի առաջ հավասարություն և խտրականության բացառում** – օրենքները պաշտպանում են բոլորին և կիրառվում են հավասարապես, իսկ խտրականությունն արգելված է:
- **Անկախ և անաչառ արդարադատության հասանելիություն** – յուրաքանչյուր ոք կարող է պաշտպանել իր իրավունքները դատարանում:

«Տիկին Արդարադատություն» նկարազարդումները՝ մալթացի նկարիչ Նադին Թեումայի





ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օրենքները կիրառվում են բոլորի նկատմամբ և սահմանում իշխանության սահմանները:

Իրավունքի գերակայությամբ ղեկավարվող պետությունում իշխանությունների և հաղաքացիների գործողությունները կարգավորվում են ժողովրդավարական ճանապարհով ընդունված օրենսդրությամբ: Գործադիր իշխանությունը չի կարող իրականացնել իր լիազորությունները և հարկադրել իր կամքը առանց սահմանափակումների կամ վերահսկողության:

Հիմնական սկզբունքներ

- Բոլոր որոշումները պետք է կայացվեն օրենքի շրջանակում:
- Օրենքները պետք է ընդունվեն հստակ և թափանցիկ ժողովրդավարական գործընթացի համաձայն:
- Հանրային իշխանության մարմինների որոշումները պետք է վերանայվեն անկախ դատական մարմինների կողմից: Կառավարությունը չի կարող իրեն նոր լիազորություններ շնորհել՝ առանց սահմանադրությամբ ամրագրված կանոնների հետևելու:
- Միջազգային կոնվենցիաները և պայմանագրերը, ինչպես նաև միջազգային դատարանների որոշումները պետք է կիրառվեն և կատարվեն:
- Օրենքը պետք է կիրառվի արդյունավետ կերպով:

Ինչու՞ է դա կարևոր
Եթե իշխանության իրականացումը պարտադիր չլիներ օրենքի շրջանակում, այն կարող էր չարաշահվել: Օրինակ՝ կառավարությունը կարող էր սահմանափակել ազատությունները ըստ իր հայեցողության: Հարգանքը ժողովրդավարական ճանապարհով ընդունված օրենսդրության նկատմամբ և դրա հստակությունը արդարության և հավասարության երաշխիք են բոլորի համար:



ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅՈՒՆ

Օրենքները հստակ, մատչելի և կանխատեսելի են

Իրավական որոշակիությունն ապահովում է, որ օրենքների հստակ, մատչելի և կանխատեսելի բնույթը և դրանցհետադարձ ուժով կիրառելու անթույլատրելիությունը: Այդպիսով՝ յուրաքանչյուր ոք նախապես գիտի իր իրավունքներն ու պարտականությունները:

Հիմնական սկզբունքներ

- Օրենքները և դատարանի որոշումները պետք է լինեն դյուրամատչելի և հասկանալի:
- Օրենքները չպետք է անկանխատեսելիորեն փոխվեն և պետք է հետևողական լինեն:
- Անձը չի կարող դատապարտվել այնպիսի արարքի համար, որը հանցագործություն կամ իրավախախտում չէր համարվում դա կատարելու պահին:

Ինչու՞ է դա կարևոր
Վստահաբար գործելու համար անհատները պետք է իմանան իրենց իրավունքներն ու պարտականությունները: Ոչ հստակ և արագ փոփոխվող օրենքները ստեղծում են անորոշություն և անկայունություն՝ անհատներին խոցելի դարձնելով անկանխատեսելի պատժամիջոցների նկատմամբ:



ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՁԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կիրառվում են վերահսկման մեխանիզմներ՝ կամայականություններից խուսափելու համար

Անսահմանափակ և չվերահսկվող իշխանությունը հանգեցնում է անարդարության: Բացարձակ իշխանության վտանգներից են կամայական որոշումները, կոռուպցիան և խաղաթղթի ճնշումները: Օրինակ, անսահմանափակ հսկողությունը՝ առանց դատական թույլտվության կամ վերահսկողության կարող է հանգեցնել մարդու իրավունքների խախտումների:

Հիմնական սկզբունքներ

- Իշխանությունների բաժանում՝ իշխանությունը չպետք է կենտրոնացված լինի մեկ մարմնի ձեռքում:
- Հիմնավորելու պարտավորություն՝ հանրային որոշումները պետք է հիմնավորված և բացատրված լինեն:
- Դատական վերանայում՝ բոլոր հանրային որոշումները պետք է հնարավոր լինի վիճարկել անկախ և անաչառ դատարաններում:

Ինչու՞ է դա կարևոր
Առանց վերահսկողության, կառավարությունը կարող է կամայական որոշումներ կայացնել, գրաքննության ենթարկել իր ընդդիմախոսներին կամ նույնիսկ վերացնել հիմնարար ազատությունները: Իրավունքի գերակայությունը ստեղծում է երաշխիքներ՝ կանխելու նման չարաշահումները:



ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

Օրենքները պաշտպանում են բոլորին և կիրառվում են հավասարապես, իսկ խտրականությունն արգելված է

Իրավունքի գերակայությունը պահանջում է, որ բոլորն ունենան օրենքով սահմանված նույն իրավունքներն ու պարտականությունները և որ նրանց նկատմամբ վերաբերմունքում չլինեն անհիմն տարբերություններ:

Օրենքի առաջ հավասարությունը նշանակում է

- Մարդկանց միջև չպետք է կատարվի անհիմն տարբերակում՝ ոչ օրենքում, ոչ էլ դրա կիրառման ժամանակ:
- Պետք է ապահովվի պաշտպանություն խտրականության բոլոր ձևերից:
- Բոլորի համար պետք է երաշխավորվեն նույն իրավունքներն ու պարտականությունները:
- Խտրականության ենթարկված յուրաքանչյուր ոք պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իրեն:

Կարևոր առաջընթաց – Կանանց ընտրելու իրավունքի օրինակը
Եվրոպայում կանանց ընտրելու իրավունքի տրամադրման ուշացումը պատմական խտրականության օրինակ է: Ֆինլանդիան առաջին եվրոպական երկիրն էր, որը 1906 թվականին կանանց շնորհեց ընտրելու իրավունք: Միայն 1918 թվականից հետո այն տարածվեց եվրոպական մյուս երկրների մեծ մասում և համընդհանուր դարձավ Եվրոպայում միայն 1984 թվականից: Այսօր իրավունքի գերակայությունը ոչ միայն երաշխավորում է կանանց ընտրելու իրավունքը, այլև ապահովում ու խրախուսում է նրանց ակտիվ մասնակցությունը քաղաքական կյանքում՝ առանց խտրականության:

ԱՆԿԱԽ ԵՎ ԱՆԱՉԱՌ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք կարող է պաշտպանել իր իրավունքները դատարանում

Անկախ և անաչառ դատարան դիմելու հնարավորությունը թույլ է տալիս մարդկանց պաշտպանել իրենց իրավունքները: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշել է, որ աշխատանքից ազատումը, սեփականությունից զրկումը կամ երեխաների հետ տեսակցելու իրավունքի դադարեցումը դատարանում վիճարկելու անհնարինությունը խախտել է դիմումատուների իրավունքները: Արագ և հասանելի արդարադատությունը կարևոր է հավասար իրավունքներ ապահովելու համար:

Հիմնական սկզբունքներ

- Յուրաքանչյուր ոք ունի դատարան դիմելու և անկախ ու անաչառ դատարանի կողմից արդար դատաքննության իրավունք:
- Դատարանի վճիռները պետք է լինեն հասանելի և հստակ բացատրված:
- Իրավաբանական խորհրդատվությունն ու իրավաբանական օգնությունը պետք է հասանելի լինեն դրա կարիքն ունեցողներին:
- Դատական ընթացակարգերը պետք է լինեն ողջամտորեն արագ և ոչ ծախսատար:
- Դատարանի որոշումները պետք է կատարվեն:

Ինչու՞ է դա կարևոր
Առանց արդարադատության հասանելիության՝ անարդարության ենթարկված քաղաքացիները չեն կարողանա պաշտպանել իրենց իրավունքները: Պետությունը պետք է ապահովի անկախ դատարաններ և բոլորի համար հասանելի դատական համակարգ:

PAX
TIBI
MAR
EVAN
GELI
STA

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի դերը

Վենետիկի հանձնաժողովն օգնել է իր անդամ պետություններին մշակել սահմանադրական համակարգեր, որոնք ապահովում են իրավունքի գերակայության սկզբունքների անհրաժեշտ իրականացումը: Հանձնաժողովը նաև տրամադրել է գործիք՝ իրավունքի գերակայության ստուգաթերթ՝ գնահատելու տվյալ երկրում իրավունքի գերակայության սկզբունքների իրականացման մակարդակը:

Վենետիկի հանձնաժողովի Իրավունքի գերակայության ստուգաթերթը

2016 թվականին մշակված Իրավունքի գերակայության ստուգաթերթում ներկայացված են իրավունքի գերակայության հիմնական սկզբունքները՝ օրինականություն, իրավական որոշակիություն, իշխանության չարաշահման և ոչ պատշաճ կիրառման կանխարգելում, արդարադատության հասանելիություն, հավասարություն և խտրականության բացառում: Դրանք ձևակերպված են որպես հենանիշեր՝ մանրամասն պարամետրերով և համապատասխան աղբյուրներով:

Ստուգաթերթի միջոցով կառավարությունը, խորհրդարանը, քաղաքացիական հասարակությունը, քաղաքացիները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները կարող են գնահատել, թե տվյալ երկրում որքանով են հարգվում իրավունքի գերակայության սկզբունքները: Այսպիսով, ստուգաթերթը թույլ է տալիս բացահայտել թերությունները կամ բացերը, որոնք պահանջում են պետության կողմից գործողություններ: Վենետիկի հանձնաժողովը բազմաթիվ առաջարկություններ է ներկայացրել այդպիսի թերությունները և բացերը վերացնելու ուղղությամբ:

Ո՞վ ենք մենք

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Վենետիկի հանձնաժողովը Եվրոպայի խորհրդի խորհրդատվական մարմինն է սահմանադրական իրավունքի հարցերով, որը կազմված է անկախ փորձագետներից:

Այն ստեղծվել է 1990 թվականի մայիսի 10-ին՝ իտալացի գիտնական Անտոնիո Լա Պերգոլայի գաղափարով: Բեռլինի պատի փլուզումից հետո հանձնաժողովը աջակցել է բազմաթիվ նախկին սոցիալիստական երկրներին ընդունել ժողովրդավարական սահմանադրություններ և օրենսդրություն և, ի վերջո, միանալ Եվրոպայի խորհրդին:

Այսօր այն օգնում է իր անդամ պետություններին մշակել սահմանադրական և օրենսդրական բարեփոխումներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Հանձնաժողովի առաջարկությունների կատարումը դյուրին է դարձրել Եվրամիության անդամակցություն ձեռք բերելու գործընթացը:

Առաքելությունը

Դիմումի առկայության դեպքում և ներպետական իշխանությունների, պետական հաստատությունների, շահագրգիռ կողմերի և քաղաքացիական հասարակության հետ խորհրդատվությունների ներառական գործընթացի միջոցով, Վենետիկի հանձնաժողովը գնահատում է սահմանադրական և օրենսդրական բարեփոխումները, հատկապես ընտրական և դատական ոլորտներում, և ներկայացնում է ոչ պարտադիր ուժ ունեցող առաջարկություններ, թե ինչպես կատարելագործել այդ բարեփոխումները՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության սկզբունքները հարգելու և կիրառելու, ինչպես նաև կառավարման արդյունավետ ու կենսունակ համակարգեր ստեղծելու համար:

Անդամ պետություններ

Վենետիկի հանձնաժողովի կազմում են Եվրոպայի խորհրդի 46 անդամ պետություններ և ևս 15 այլ պետություններ Ամերիկայից, Աֆրիկայից և Ասիայից:

Ինչու՞ Վենետիկ

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը ստացել է Վենետիկի հանձնաժողով անվանումը իտալական ծովածոցի հայտնի քաղաքի անունից, որտեղ այն գումարել է իր առաջին նիստը և որտեղ շարունակում է հավաքվել տարեկան չորս անգամ:

1990-2025 - ձեռքբերումները

Իր գոյության 35 տարիների ընթացքում, շնորհիվ իր անկախության և անաչառության, իր պրոֆեսիոնալիզմի և ներառական աշխատանքային մեթոդների, Վենետիկի հանձնաժողովը զգալի ազդեցություն է ունեցել ժողովրդավարական սահմանադրությունների ընդունման և ինստիտուտների ժողովրդավարական գործառնության ապահովման գործում: Մասնավորապես, Հանձնաժողովը նպաստել է իրավունքի գերակայության սկզբունքների պահպանման բարձրացմանը, ինչպես նաև իշխանությունների բաժանման և դատական անկախության ամրապնդմանն իր անդամ պետություններում:

- **1000+**. Սահմանադրական և օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ կարծիքների և զեկույցների թիվը
- **50+**. Հանձնաժողովի օգնությամբ մշակված կամ վերանայված սահմանադրությունների թիվը
- **200+**. Հանձնաժողովի աշխատանքում ներդրում ունեցած անկախ իրավաբանական փորձագետների թիվը

Ինչու՞ է սա կարևոր բոլորիս համար

Իրավունքի գերակայություն նշանակում է՝

Կայուն և խաղաղ ժողովրդավարություն:
Քաղաքացիներ, որոնք ազատ են և պաշտպանված կամայականությունից:
Ավելի արդար և հավասար հասարակություն:

Վենետիկի հանձնաժողովի կայքէջ
https://venice.coe.int

Նկարազարդումները՝ Նադին Թեումայի
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Սույն հրատարակության որևէ մաս չի կարող
թարգմանվել, վերարտադրվել կամ փոխանցվել
առանց Հաղորդակցությունների գծով տնօրինության
կողմից նախապես տրված գրավոր թույլտվության
(F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):
Լուսանկարներ © Եվրոպայի խորհուրդ
Հրատարակված է Եվրոպայի խորհրդի կողմից
F-67075 Strasbourg Cedex

© Եվրոպայի խորհուրդ, հուլիս 2025 թ.

M. O. BUGUCCHIO

Այս բրոշյուրում ուսումնասիրվում են իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքները՝ օրինականություն, իրավական որոշակիություն, իշխանության չարաշահման կանխարգելում, հավասարություն օրենքի առաջ և արդարադատության հասանելիություն: Այս սկզբունքները ձևավորում են ժողովրդավարության և մարդու իրավունքների անկյունաքարը՝ ապահովելով հաշվետու կառավարում, անհատական ազատություններ և հասարակական արդարություն: Ծանոթացեք, թե ինչպես է Եվրոպայի խորհուրդը Վենետիկի հանձնաժողովի գործունեության միջոցով աջակցում պետություններին՝ պահպանելու այս չափանիշները և պաշտպանելու բաղաքացիներին կամայական իշխանությունից: Անկախ նրանից՝ բաղաքակալությունը մշակող եք, ուսանող, թե պարզապես մտահոգ բաղաքացի, այս ուղեցույցը բացահայտում է, թե ինչու է կարևոր իրավունքի գերակայությունը և ինչպես է այն ամեն օր ապահովում մեր ազատությունների պաշտպանությունը:

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

VENICE COMMISSION
COMMISSION DE VENISE

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE